<u>Հայտարարություն</u>

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 43-34.4-Մ2-10)

1.իրականացնում է խմելու ջրի մատակարարման ոլորտում սպառողների սպասարկման որակի, առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում կատարված վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների վերլուծությունը, ամփոփումը և արդյունքների հրապարակումը.

2.իրականացնում է ջրամատակարար ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկի՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցման գործընթացը.

3.իրականացնում է էներգետիկայի բնագավառի և ջրային ոլորտի կարգավորող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգի աշխատանքները.

4.իրականացնում է էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողների սպասարկման որակի, առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում կատարված վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծությունը, ամփոփումը և արդյունքների հրապարակումը.

5. իրականացնում է Բաժնի գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի մշակումը, վարչական վարույթների իրականացման և ընդունված ակտերի կատարման ապահովումը, այլ փաստաթղթերի նախապատրաստումը և աշխատանքների իրականացումը:

2.Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

Տնտեսագիտություն կամ կառավարում և վարչարարություն կամ էներգետիկական մեքենաշինություն կամ էներգետիկա մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն.

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքի, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

3.Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝
Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝
«10» «սեպտեմբերի» 2019թ

5.Աշխատավարձի չափը՝
Երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը (212309) դրամի չափով.

6.Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝
ք.Երևան, Սարյան 22, հեռ.52-53-40-108,118

7.Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,
մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
(Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118):